ԱՎԴ1/0303/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 օգոստոսի 2025 թվական քՍերևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Հայկ Ժիրայրի Ղարագյոզյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 26132424 (ԱՎԴ1/0303/01/24) քրեական վարույթը:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Պետրոսյան) 2024 թվականի դեկտեմբերի 6-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 11-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Մ.Արամյան) 2025 թվականի հուլիսի 22-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 29-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2024 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ Հայկ Ղարագյոզյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա, հանդիսանալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձ, վարել է տրանսպորտային միջոց, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում:*

Այսպես.

Հայկ Ժիրայրի Ղարագյոզյանը ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Պարեկային ծառայության» 2024 թվականի հունիսի 6-ի թիվ 8180407781 որոշմամբ երկու տարի ժամկետով՝ 2024 թվականի հունիսի 6-ից մինչև 2026 թվականաի հունիսի 8-ը զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով, որի վերաբերյալ կազմված արձանագրությանը ծանոթացել է անձամբ:

Դրանից հետո Հայկ Ղարագյոզյանը, հատուկապես տեղեկացված լինելով վարորդական իրավունքից երկու տարի ժամկետով զրկված լինելու մասին, 2024 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 13:10-ին, Երևան-Երասխ M2 ավտոճանապարհի Արարատի մարզի հատվածում վարել է «Տոյոտա» մակնիշի, 50 YH 100 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը, որպիսի փաստը հայտնաբերվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Պարեկային ծառայության» Արարատի մարզի գումարտակի կրտսեր պարեկ Վրեժ Ապերյանի կողմից և նույն օրը՝ ժամը 14.05-ին կազմվել է թիվ 8180423685 արձանագրությունը: (…)»[1]*:*

7. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախնական դատաքննությունների ընթացքում մեղադրյալը չի ներկայացել դատաքննություններին և Դատարանի աշխատակազմին հայտարարել է, որ չի ներկայանալու դատական նիստերին, ծանուցելու նպատակով իր իրական բնակության հասցեն ճշգրտելու հարցին պատասխանել է, որ իր հասցեն չի հայտնելու, ցանկանում է, որ իր վերաբերյալ գործի վարույթը քննվի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում:*

Պաշտպան Հովհաննես Վարդանյանը միացել է իր պաշտպանյալի դիրքորոշմանը, իսկ հանրային մեղադրողը հիշյալ հարցի լուծումը թողել է Դատարանի հայեցողությանը:

(…)

Դատարանը եզրահանգում է, որ սույն քրեական գործի ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և ըստ ընդդատության ուղարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը՝ դատակոչված մեղադրյալ Հայկ Ղարագյոզյանն ըստ մեղադրական եզրակացության հաշվառված և բնակվում է Երևան քաղաքի Նոր Նորքի Բակունցի փողոցի 2-րդ նրբանցք 4/6 հասցեում (ըստ

[1] Տե՛ս վարույթի նյութեր, թերթեր 59-60:

ոստիկանության ՀՈԳՎ Նոր Նորքի բաժնի գրության՝ հիշյալ հասցեում վերջինս չի բնակվում. բնակարանը վաճառված է), իսկ քրեական վարույթով միակ հարցաքննված վկան՝ Ժիրայր Ղարագյոզյանը ևս բնակվում է Երևան քաղաքում (պաշտպանը ներգրավել է ՀՀ ՓՊ Հանրային պաշտպանի գրասենյակից և ևս բնակվում է Երևան քաղաքում):

Նշված եզրահանգումը պայմանավորված է նաև արդարադատության շահով՝ նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ մեղադրյալի վերաբերյալ ևս մեկ քրեական գործ՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի ՕՏՔ ձև 8 տեղեկանքի և Դատալեքս տեղեկատվական համակարգի (թիվ ԵԴ1/0025/01/23) քննվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում:

Հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված օրենսդրական պահանջը, այն է՝ տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում՝ Դատարանը եզրահանգում է, որ անհրաժեշտ է փոխել քրեական գործի տարածքային ընդդատությունը և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.07.2025թ. որոշմամբ արձանագրվել է, որ սույն քրեական գործով դատակոչված միակ վկան՝ ըստ մեղադրական եզրակացության, բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, միևնույն ժամանակ նշվել է, որ մեղադրյալի բնակության վայր ևս ըստ մեղադրական եզրակացության նշված է ք.Երևան, սակայն միևնույն պարագայում արձանագրված է, որ ըստ ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Նոր Նորքի բաժնից ստացված գրության մեղադրյալը նշված հասցեում չի բնակվում և պարզված չէ նրա*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, թերթեր 157-161:

ներկայիս բնակության հասցեն, արդյունքում նման պարագայում հնարավոր չէ արձանագրել, որ մեղադրյալը որոշումը կայացնելու դրությամբ բնակվում է ք.Երևանի տարածքում, բացի այդ որպես հանրային պաշտպանի բնակության վայր ևս նշված է ք.Երևանը, սակայն վերջինիս բնակության վայրի վերաբերյալ հավաստում քրեական գործում առկա չէ: Նման պարագայում հնարավոր չէ միանշանակ եզրահանգել, որ սույն քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայրն հանդիսանում է ք.Երևանը, հետևաբար նաև հնարավոր չէ արձանագրել սույն իրավիճակի առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման հնարավորությունը:

(…)

Բացի այդ պետք է արձանագրել, որ մեղադրյալը փաստացի դատական նիստով չի ներկայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդություն և համաձայնություն:

Հետևաբար՝ վերոնշյալ հանգամանքները համադրելով և գնահատելով վերաբերելի իրավական նորմերի համատեքստում ստացվում է, որ գործի տարածքային ընդդատությունը փոխելու դրությամբ առնվազն առկա չէին տեղեկություններ առ այն, որ սույն քրեական վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքի տարածքում և, հետևաբար սույն գործով տարածքային ընդդատությունը չի կարող փոխվել և քրեական գործը ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Բացի այդ սույն հարցի քննարկումը չի իրականացվել մեղադրյալի մասնակցությամբ, նրա ներկայությամբ:

Ստացվում է, որ սույն պարագայում քրեական գործի տարածքային ընդդատության փոփոխությունը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, ուստիև քրեական գործի տարածքային ընդդատությունը 11.07.2025 թվականին որոշում կայացնելու դրությամբ ենթակա չէր փոփոխման: (…)»[3]*:*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, թերթեր 168-171:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից:

Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Համաձայն ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոր Նորքի բաժնից ստացված գրության՝ *«Հայտնվում է, որ ըստ «Նոր-Նորքի 4/5» համալիրության կողմից տրված տեղեկանքի Հայկ Ժիրայրի Ղարագյոզյանը չի բնակվում Բակունցի 2 նրբ. 4 շենք 6 բնակարան հասցեում»*[7]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով հանդերձ, որ համաձայն ոստիկանության գրության՝ մեղադրյալ Հայկ Ղարագյոզյանը Երևան քաղաքի՝ մեղադրական եզրակացության մեջ նշված հասցեում չի բնակվում, միաժամանակ փաստել է, որ մեղադրյալը, քրեական վարույթով հարցաքննված միակ վկան և հանրային պաշտպանը հաշվառված և բնակվում են Երևան քաղաքում: Նման պայմաններում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ սույն վարույթով առնվազն առկա չէին տեղեկություններ առ այն, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում, գտել է, որ վարույթի տարածքային ընդդատությունը չէր կարող փոխվել:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի տարածքային ընդդատության հարցի քննարկումը չի իրականացվել մեղադրյալի մասնակցությամբ, գտել է, որ

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, թերթ 129:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

մեղադրյալը փաստացի չի ներկայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդություն և համաձայնություն[9]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Մասնավորապես, սույն վարույթով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դատական նիստն անցկացրել է մեղադրյալի բացակայությամբ և առանց վերջինիս՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ հստակ կամահայտնությունը պարզելու, որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին՝ հիմք ընդունելով մեղադրյալի կողմից դատարանի աշխատակազմին հայտնած դիրքորոշումը: Նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ տվյալ պարագայում, առանց մեղադրյալ Հ.Ղարագյոզյանի մասնակցության վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ հարցի քննարկումն իրավաչափ համարվել չի կարող:

17. Բացի այդ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ սույն վարույթով չի հաստատվում նաև այն հանգամանքը, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Մասնավորապես, սույն վարույթով առկա չեն բավարար փաստական տվյալներ՝ հաստատված համարելու, որ մեղադրյալ Հ.Ղարագյոզյանը բնակվում է Երևան

[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

քաղաքում, որպիսի արձանագրում կատարել է նաև Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը:

18. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

19. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ1/0303/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ